«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«30» 09. 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի տեղակալ _____ Հ. Այունց

ՍՑ-ԳԲԽ-14/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.04.2015թ. N 1/73-1/803129-15 գրությամբ ներկայացված «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02246682) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը 08.04.2015թ. N 1/73-1/803129-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար՝ կից ներկայացնելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

2. «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 16.04.2015թ. N 09/032-836 գրությամբ դիմել «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ին:

Ընկերությունը Կենտրոնին հասցեագրված 29.05.2015թ. N 0105-ԱԱ գրությամբ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակում և սպասարկում ձեռք բերելու նպատակով «ՀՀ ՖՆ ՇՀԾՁԲ-15-11/6-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը կազմակերպվել է մինչև 2015թ. ապրիլի 1-ը, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտնել է, որ չունի հարկային պարտավորություն:

Ընկերության տնօրենը, մասնակցելով Կենտրոնում 26.06.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-14/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, հայտնել է, որ «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ն 01.04.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ ֆինանսների նախարարությանը 08.04.2015թ. N 1/73-1/803129-15 գրությամբ ներկայացրել է «ՀՀ ՖՆ ՇՀԾՁԲ-15-11/6-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-14/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը Կենտրոնում 2015թ. հունիսի 26-ին, ժամը 12:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստին:

4. ՍՑ-ԳԲԽ-14/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 08.04.2015թ. N 1/73-1/803129-15 գրությամբ ներկայացված «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակում և սպասարկում ձեռք բերելու նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՖՆ ՇՀԾՁԲ-15-11/6-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 87-րդ կետը՝ Պատվիրատուն 03.04.2015թ. թիվ 18-2/[801106]-15 գրությամբ դիմել է ՀՀ ՖՆ Կենտրոնի հարկայի տեսչություն՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ժամկետանց պարտքեր ունենալու (կամ դրանց բացակայության) վերաբերյալ:

4. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնի հարկային տեսչությունը 03.04.2015թ. N 33-1/[801508]-15 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունը պետական բյուջեի հանդեպ կազմում է 4116971 ՀՀ դրամ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 08.04.2015թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 2-1 արձանագրության 1-ին կետով որոշել է ՀՀ ՖՆ կենտրոնի հարկային տեսչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն մերժել «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ի հայտը:

6. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի 03.04.2015թ. N 18-2/[801106]-15 և ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնի հարկային տեսչության 03.04.2015թ. N 33-1/[801508]-15 գրություններում առկա չէ տեղեկատվություն «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության հարկային վճարների գծով ժամկետանց պարտքեր ունենալու ժամանակահատվածի վերաբերյալ, Կենտրոնը 28.08.2015թ. թիվ 01/04.1/2231-15 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով հայտնել, արդյոք Ընկերությունը ***01.04.2015թ.*** դրությամբ ***(հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** ունեցել է ***ժամկետանց*** պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային վճարների գծով, թե ոչ:

7. Ի պատասխան Կենտրոնի հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 08.09.2015թ. N 1/73-1/24924-15 գրությամբ Կենտրոնին տրամադրել է ՀՀ ՖՆ կենտրոնի հարկային տեսչության 03.09.2015թ. 33-2/[919287]-15 գրությունը և տեղեկանք ***01.04.2015թ.*** դրությամբ ***(հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

5. ՍՖ-ԳԲԽ-14/15 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.04.2015թ. N 1/73-1/803129-15 գրությամբ ներկայացված փաստաթղթերը, «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ի 29.05.2015թ. N 0105-AA գրությունը, Կենտրոնի 28.08.2015թ. թիվ 01/04.1/2231-15 գրությունը, ՀՀ ֆինանսների նախարարության 08.09.2015թ. N 1/73-1/24924-15 գրությամբ ներկայացված ՀՀ ՖՆ կենտրոնի հարկային

տեսչության 03.09.2015թ. 33-2/[919287]-15 գրությունը և տեղեկանքը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ) 149-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Այսպիսով, «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (այն է՝ 01.04.2015թ.) ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչի պայմաններում Ընկերությունը, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին

մասի 2-րդ կետի համաձայն, իրավունք չուներ մասնակցելու գնումնե-րի ընթացակարգերին:

Մինչդեռ Ընկերությունը «ՀՀ ՖՆ ՇՀԾՁԲ-15-11/6-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 01.04.2015թ. հայտ ներկայացնելով՝ փաստորեն հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (01.04.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, ինչը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու պայմաններում Ընկերության կողմից հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Այսպիսով, ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 08.09.2015թ. N 1/73-1/24924-15 գրությամբ ներկայացրած ՀՀ ՖՆ կենտրոնի հարկային տեսչության 03.09.2015թ. 33-2/[919287]-15 գրության՝ ***«Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ն 2015թ. ապրիլի 1-ի դրությամբ*** ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն, իսկ Ընկերության կողմից ***2015թ. ապրիլի 1-ի դրությամբ*** ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ որևէ հիմնավոր ապացույց չի ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 08.04.2015թ. N 1/73-1/803129-15 գրությամբ «Էյ-Էյ-ՍՈՖԹ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02246682) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչի ժ/պ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-14/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան